ԼԱԼԱ ՍԻՄՈՆՅԱՆ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՆԵՐՈՒԺԸ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԶԳԱՑՄՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i73.265

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածի նպատակն է ներկայացնել «Երաժշտություն» առարկայի կրթական ներուժը դեռահասության տարիքում գտնվող սովորողների գեղագիտական զգացմունքների ձևավորման և զարգացման գործում: Հետազոտության շրջանակներում վերլուծության են ենթարկվում առարկայի պետական չափորոշիչը, ծրագիրը, ներկայացվում են առարկայի ծրագրային և չափորոշչային պահանջները, կազմակերպման ձևերը, թեմատիկ պլանը (5-9-րդ դասարաններում) և ակնկալվող վերջնարդյունքները: Բացահայտվում է, թե որքանով են վերջիններս նպաստում դեռահասների գեղագիտական զգացմունքների՝ այդ թվում հուզական արձագանքի, հուզական ապրումակցման և զգացմունքների իմաստավորման, գեղագիտական ընկալման, գնահատման, ինչպես նաև գեղագիտական պահանջմունքների ձևավորմանը:

Բանալի բառեր և արտահայտություններ. *գեղագիտական զգացմունքներ, դեռահաս, երաժշտական արվեստ, երաժշտություն առարկա, հույզեր, ունկնդրում, ընկալում:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դեռահասության տարիքն անձի զարգացման այն կարևոր և պատասխանատու անցումային շրջափուլն է, որն ուղղորդում է նրան դեպի երիտասարդություն՝ դեպի մեծ և հասուն կյանք: Դեռահասության տարիքային շրջանում զարգացման այլ բնույթ և թափ են ստանում այնպիսի կարևոր

գործընթացներ, ինչպիսիք են մշակութային-արժեքային համակարգի ձևավորումը, զգացմունքները, սկզբունքայնությունը, ճաշակը և այլն (**Выготский Л., 1984**):

Դեռահասության տարիքը երբեմն համարվում է բարդ և ճգնաժամային, քանի որ այս տարիքում անհատը փորձում է մուտք գործել իր համար նոր, բայց անչափ ցանկալի՝ մեծահասակության շրջափուլ և մեծ սպասելիքներ ու ապրումակցման կարիք է զգում հենց մեծահասակների կողմից: Նրա համար կարևոր են դառնում ոչ միայն հասակակիցների, այլև մեծահասակների կողմից սերը, վստահությունը, փոխըմբռնումը սեփական անձի նկատմամբ, որոնց առկայության դեպքում նվազում է ճգնաժամերի և սթրեսային իրավիճակների հավանականությունը (**Божович Л., 1978**):

Գեղագիտական զգացմունքների ձևավորման գործընթացը՝ որպես շրջակա իրականության խոր ընկալման կարևոր գործոն, դեռահասության շրջանում մեծ կարևորություն է ստանում: Ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դառնում, որ գեղագիտական զգացմունքը բարդ համալիր ամբողջություն է, որի ձևավորումը տեղի է ունենում որոշակի փուլերի հաջորդական զարգացումից: Այն ընդգրկում է անձի գեղագիտական ընկալման, գեղագիտական ապրման, գեղագիտական դատողությունների և գեղագիտական գնահատման, ինչպես նաև անձի հուզական ռեակցիայի, ապրումակցման և զգացմունքների իմաստավորման գործընթացները (**Leder H., Belke B., Oeberst A., & Augustin D., 2004**): «Երաժշտություն» առարկան, հանդիսանալով արվեստի յուրահատուկ ճյուղ, իր մեջ կրում է զգացմունքային և հուզական հիանալի աշխարհ: Այն հնարավորություն է տալիս անհատին գտնելու ներդաշնակություն, խաղաղություն և զգալ գեղեցկության իրական մարմնավորումը երաժշտական հնչյունների ներքո:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները՝ նորմատիվային և ուսումնական փաստաթղթերի բովանդակային վերլուծություն,

համեմատական վերլուծություն, ինչպես նաև տեսական աղբյուրների ուսումնասիրություն:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ժամանակային արվեստի տեսակ է երաժշտությունը, որը հզոր ազդեցություն ունի անհատի ներաշխարհի և հուզազգայական ոլորտի վրա: Այն կարող է փոխել մարդու տրամադրությունը, ներշնչել նրան կատարելու որոշակի գործողություններ, ինչպես նաև ազդել որոշումների կայացման վրա **(Теплов Б., 1947)**: Դեռահասության շրջանում, երբ անձի հոգեկանում ընթանում է բուռն զգացմունքային տեղատարափ, ուսուցման գործընթացում հարկավոր է ձևավորել երաժշտության գիտակցված, ակտիվ և հուզական ընկալման այնպիսի միջավայր, որպեսզի յուրաքանչյուր սովորող ազատ և անկաշկանդ արտահայտի իր ապրումներն ու զգացմունքները:

Երաժշտությունը հարստացնում և խթանում է ոչ միայն անձի հուզական, այլ նաև հոգևոր, ստեղծագործական, բարոյական և գեղագիտական կողմերը: Այն ունի հզոր հաղորդակցական ներուժ, քանի որ ունկնդրման, կատարման, ստեղծագործելու և երաժշտության անմիջական ապրման պահին է ստանում իր հիմնական իմաստը, թողնելով համապատասխան ազդեցություն անձի կյանքում **(Петрушин В., 2008)**:

Հետազոտության շրջանակներում փորձ է արվել պարզելու, թե որքանով է հանրակրթական դպրոցի «Երաժշտություն» առարկան նպաստում դեռահասների գեղագիտական զգացմունքների ձևավորմանը՝ ելնելով առարկայի պետական չափորոշչի և ծրագրի վերլուծությունից: «Երաժշտություն» առարկան դպրոցում ապահովում է ոչ միայն սովորողների երաժշտական-տեսական գիտելիքների յուրացումը, երաժշտական լսողության զարգացումն ու երգչական ունակությունների ձևավորումը, այլև այս գործընթացում հիմք են դրվում սովորողների արժեքային վերաբերմունքին, մշակութային առանձնահատկություններին, ազգային գիտակցությանը, զգացմունքների կրթմանն ու զարգացմանը, անձի ներդաշնակ, հոգևոր, բարոյական և

գեղագիտական պատկերացումների զարգացմանը **(«Երաժշտություն» առարկայի 1-12-րդ դասարանների առարկայական չափորոշիչ, 2023)**:

Դիտարկելով «Երաժշտություն» առարկայի պետական չափորոշչի (ըստ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի մարտի 30-ի N 35-Ն հրամանի. https://www.arlis.am/hy/acts/176070) բովանդակությունը, ուղղվածությունը դեպի սովորողի գեղագիտական փորձի և հուզական արձագանքի զարգացման կարևոր գործընթացները, հասկանում ենք, որ առարկան թե՛ տեսականորեն, թե՛ գործնականորեն լի է մի շարք կարևոր գիտելիքներով:

Չափորոշչում հիմնական ծրագրի սովորողի համար առանձնացված նպատակներն ուղղված են այնպիսի գործընթացների ապահովմանը, ինչպիսիք են, օրինակ, մշակութային արժեքների պահպանումը, գեղագիտական փորձի և գործունեության հարստացումը, երաժշտական ստեղծագործության գիտակցված ընկալումը, երաժշտական կերպարի բացահայտումը, ստեղծագործական հնարավորությունների զարգացումը, ձեռք բերած գիտելիքների կիրառումը կյանքում, գեղագիտական պահանջմունքի ձևավորումը, սեփական մտքերն ու գաղափարները ճշգրիտ արտահայտելու և մյուսներին լսելու մշակույթի ձեռք բերման կարողությունները **(«Երաժշտություն» առարկայի 1-12-րդ դասարանների առարկայական չափորոշիչ, 2023)**:

«Երաժշտություն» առարկայի բովանդակությունն ապահովվում է մի քանի կարևոր գործունեության ձևերի միջոցով, որոնցից յուրաքանչյուրն ունեն հստակ նպատակներ, հատկապես դեռահասության տարիքային փուլում, երբ սովորողի՝ երաժշտական ստեղծագործության ունկնդրման, դրա ընկալման և վերլուծության գործողությունները կրում են ավելի գիտակցական բնույթ: Առարկայի համար սահմանված նպատակներն իրականացվում են հետևյալ գործունեության ձևերի միջոցով.

1. երաժշտական ստեղծագործության ունկնդրում և երաժշտության պատմություն,
2. երգերի անհատական և խմբային կատարում,

3. երաժշտառիթմական և պարային շարժում,
4. անհատական ստեղծագործում կամ իմպրովիզացիա (շարժումային և երգային, հանպատրաստից հորինում),
5. ուսումնական էքսկուրսիաներ թանգարաններ, համերգասրահներ և այլ մշակութային օջախներ:

Թվարկված գործունեության ձևերը մեր կողմից դիտարկվել են որպես սովորողների գեղագիտական զգացմունքների ձևավորման կարևոր բաղադրիչներ: Այսպես. երաժշտության ունկնդրումը կապված է սովորողի գեղագիտական և հուզական ընկալման ակտիվ գործընթացի հետ, որը գեղագիտական զգացմունքի առաջացման առաջնային պայմանն է: Երաժշտության պատմությունն իմանալու և դրան տիրապետելու գործընթացը կապված է ինչպես տեսական գիտելիքների հարստացման, այնպես էլ երաժշտական ստեղծագործության ճշգրիտ ըմբռնման, երաժշտական կերպարի բացահայտման և զգացմունքների իմաստավորման գործընթացների հետ: Երգեցողությունը թույլ է տալիս սովորողին անմիջականորեն ներգրավվել բարձր հուզական գործունեության մեջ, քանի որ սա ոչ միայն երաժշտական գործունեության կատարողական տեսակ է, այլ զգացմունքների ապրման և դրանց արտահայտման կատարյալ ձև: Խմբային երգեցողությունն ապահովում է սովորողների միջև անսամբլի գիտակցումը, ինչը մեծ կապ ունի ինչպես սեփական հույզերի և զգացմունքների ճանաչման, այնպես էլ խմբի մյուս անդամների հետ հուզական ապրումակցման գործընթացի կազմակերպման համար: Երաժշտառիթմական և պարային շարժումը մեծ նշանակություն ունի սովորողի՝ սեփական զգացմունքները մարմնի շարժումներով և ռիթմերով արտահայտելու գործում, երբ զգացմունքը դառնում է շարժման ձև: Այն անմիջականորեն կապված է նրա գեղագիտական փորձի հարստացման, զգացմունքների ճշգրիտ կառավարման ու մարմնի շարժումներով դրանք արտահայտելու գործընթացների հետ: Երաժշտության հանպատրաստից ստեղծագործումը՝ իմպրովիզացիան, կարևոր գործունեություն է, որը հանդիսանում է երաժշտության միջոցով հուզական ապրման, գեղագիտական

փորձի և գործունեության ծավալման, գեղագիտական պահանջմունքի ձևավորման և գեղագիտական զգացմունքների առաջացման ու դրանց դրսևորման միջոց: Երբ անհատը ստեղծագործում է, նրա հոգեկանում ակտիվանում են ինչպես տրամաբանական գործընթացները, այնպես էլ հուզական ողջ ոլորտը: Եվ վերջին կարևոր գործունեությունը, որը կապված է մշակութային միջավայրի անմիջական հաղորդակցության հետ, մեծ նշանակություն ունի սովորողի արժեքային համակարգի ձևավորման, գեղագիտական փորձի ձեռքբերման, գեղագիտական ճաշակի և պահանջմունքի ձևավորման, գեղագիտական զգացմունքների ապրման և դրանք կրկին զգալու և վայելելու կարևոր գործընթացների հետ: Այսպիսով, դիտարկելով առարկայի բովանդակային կետերն ու կառուցվածքային առանձնահատկությունները, տեսնում ենք, որ գեղագիտական զգացմունքների ձևավորման համար կան բոլոր անհրաժեշտ հիմքերը:

«Երաժշտություն» առարկայի ծրագրային բովանդակությունը կառուցվում է առարկայի չափորոշչով սահմանված 4 գլխավոր բաժինների հիման վրա: Դրանք են՝ **(«Երաժշտություն» առարկայի 1-12-րդ դասարանների առարկայական ծրագիր, 2023)**

- ✓ **Ստեղծում**
- ✓ **Ներկայացում**
- ✓ **Ընկալում և արձագանք**
- ✓ **Կապակցում**

Սրանցից յուրաքանչյուրն իրենց արտահայտումն են գտնում գործունեության 5 տեսակների միջոցով:

«Երաժշտություն» առարկայի պետական ծրագիրը բաղկացած է իրար հաջորդող թեմաներից և ենթաթեմաներից, որոնք կառուցված են առարկայի չափորոշչում սահմանված բովանդակային հիմնական գաղափարների հիման վրա՝ ստեղծում, ներկայացում, ընկալում և արձագանք, կապակցում: Յուրաքանչյուր թեմայի համար սահմանված են հստակ նպատակներ և վերջնարդյունքներ, որոնց կողքին գրված է, թե դրանք ՀՊՉ-ով սահմանված՝

հիմնական ծրագրի ավարտին ներկայացվող վերջնարդյունքներից որ կետերին են համապատասխանում։

5-րդ դասարանում թեմատիկ բովանդակությունն ընդգրկում է արվեստների փոխկապակցվածությունը, դրանց միասնությունից առաջացած արտահայտչական միջոցները, գեղարվեստական նշանակությունը, դրանցում առկա գեղարվեստական կերպարների ընկալումն ու վերլուծությունը, արվեստների արժևորումը և, որ ամենակարևորն է, յուրաքանչյուր ենթաթեմայի վերջնարդյունքներում նշվում է ինչպես դրանց վերաբերյալ գիտակցված գնահատական տալու, այնպես էլ արվեստի ստեղծագործության միջոցով հուզական արձագանքի, սեփական տպավորություններն ու հույզերը ճշգրիտ արտաբերելու ունակության զարգացումը։

6-րդ դասարանում ավելի մանրամասն ուսումնասիրվում են երաժշտական-թատերական արվեստի տարատեսակ ժանրերը (համալիր արվեստների), նշանավոր կատարողներն ու գործիչները։ Այս համատեքստում դրվում են այն կարևոր հիմքերը, որոնք պատասխանատու են յուրաքանչյուր ժանրի ստեղծագործության արժևորման, դրանց վերաբերյալ գիտելիքների իմացության, գնահատման, ժանրային կերպարային առանձնահատկությունների ըմբռնման, դրանց վերաբերյալ հուզական արձագանքի և ապրումակցման գործընթացների ձևավորման համար։

7-րդ դասարանում թեմատիկ պլանը հիմնվում է հանրամատչելի երաժշտության, ազգային երգ ու պարի վրա, ինչպես նաև դասական ժանրի վերաբերյալ գիտելիքների իմացության, դրանց նշանակության, արժևորման գործընթացների, ազգային, դասական, ժամանակակից երաժշտության միջոցով սեփական զաղափարներն ու հույզերն արտահայտելու, համերգասրահներ, մշակութային օջախներ այցելելու պահանջի առաջացման գործընթացների վրա։

8-րդ դասարանի թեմատիկ բովանդակությունն ամբողջապես հիմնված է ժամանակակից երաժշտության վրա՝ ջազ, ռոք, փոփ, բլյուզ, և այլն։ Սովորողների մեջ սերմանվում են երաժշտական այս ժանրերի արժևորման, դրանց

առանձնահատկություններն ընկալելու, տարբերելու, տարբեր տեսակի ժանրային ստեղծագործությունների միջոցով զգացմունքներն արտահայտելու և սեփական տեսակետն ու դիրքորոշումը ներկայացնելու կարևոր գործընթացներ։

9-րդ դասարանում թեմատիկ պլանը հիմնվում է երաժշտության և կյանքի կապի միասնականության վրա, թե ինչ ազդեցություն է ունեցել և ունի երաժշտական արվեստը հայ և համաշխարհային իրականության մեջ և մեր կյանքում։

Հետազոտության շրջանակներում հիմնական ծրագրի ավարտին ներկայացվող վերջնարդյունքները դիտարկում ենք որպես գեղագիտական զգացմունքների ձևավորման ենթադրյալ վերջնարդյունքներ և դրանց ապահովման կարևոր օղակներ՝ երաժշտական յուրաքանչյուր գործունեության տեսանկյունից.

Հիմնական գաղափար	Գործունեության տեսակ	Հիմնական ծրագրի ավարտին գեղագիտական զգացմունքի ձևավորման համապատասխան վերջնարդյունք
Ստեղծում	Երաժշտության ունկնդրում	Տեսական գիտելիքների իմացություն տարբեր ազգերի մշակութային արժեքները ունկնդրելիս, դրանց վերաբերյալ սեփական կարծիքի ձևավորում և արտահայտում, որոնք առաջ են բերում գեղագիտական գնահատման ունակություններ, երաժշտական ստեղծագործության վերաբերյալ քննադատական վերլուծության, գեղարվեստական կերպարի և դրա առանձնահատկությունների բացահայտում, որոնք հարստացնում են սովորողի գեղագիտական փորձը։
	Երգեցողություն	Տարբերել երգչական գեղեցիկ ձայնը և դրա վերաբերյալ տիրապետել տեսական գիտելիքների։ Այս վերջնարդյունքը

		ձևավորում է գեղագիտական վերաբերմունք, ինչպես նաև ճշգրիտ երգեցողության միջոցով զարգանում է երաժշտական կերպարի ընկալման մակարդակը:
	Երաժշտառիթմական շարժում	Երաժշտական տպավորությունների ներքո մարմնի շարժումների արտահայտումը ձևավորում է հուզական արձագանքի զարգացման, զգացմունքների կառավարման և դրանց արտահայտման գործընթացները: Նոր երաժշտական ռիթմական պատկերների ստեղծումը ձևավորում է գեղագիտական ճաշակ և հարստացնում գեղագիտական փորձը:
	Իմպրովիզացիա	Որոշակի արտահայտչամիջոցների շնորհիվ երաժշտական կերպարի կամ ստեղծագործության ստեղծումը նպաստում է սովորողի գեղագիտական, հուզական ընկալման, հուզական ապրումակցման, երաժշտական կերպարի միջոցով սեփական զգացմունքներն արտահայտելու գործընթացների իրականացմանը, ինչպես նաև ձևավորում է գեղագիտական ճաշակ:
Ներկայացում	Կատարում	Ճշգրիտ երգեցողության միջոցով զարգանում են գեղարվեստական բարձրարժեք ստեղծագործությունից գեղագիտական տպավորություններ ստանալու, երաժշտական կերպարի բացահայտման գործընթացները, պարային շարժումների կատարումը երաժշտության ներքո զարգացնում է հուզական ինքնարտահայտման գործընթացը, իսկ երաժշտության դասերից դուրս գիտելիքների կիրառումը նպաստում է գեղագիտական

		պահանջմունքի և փորձի զարգացմանը:
	Ներկայացում	Երաժշտական կերպարի ընկալումը որպես սեփական զգացմունքների, երևակայության, գիտակցության արտահայտման միջոց մեծ նշանակություն ունի գեղագիտական զգացմունքների ապրման և դրանց արտահայտման գործընթացներում, ազգային երգ ու պարի ուսումնասիրումը, արժևորումն ու համեմատումը այլ ազգերի մշակութային ժառանգության հետ զարգացնում է գեղագիտական գնահատման, դատողություններ կատարելու, գեղագիտական գիտակցության ձևավորման հնարավորությունները, իսկ թատերական հմտությունների ձևավորման միջոցով ինքնարտահայտվելու գործընթացը մեծ է հուզական ապրումակցման, սեփական զգացմունքները կառավարելու և արտահայտելու գործընթացների ապահովման համար:
Ընկալում (արձագանքում)	Ընկալում և հուզական արձագանք	Երաժշտական ընկալման միջոցով հուզական արձագանքի զարգացում, ստացած երաժշտական տպավորությունների արտահայտում և նկարագրում, ազգային և համաշխարհային գեղարվեստական ստեղծագործությունների ճանաչման ու արժևորման միջոցով գեղագիտական ճաշակի և գեղագիտական փորձի հարստացում:
	Մեկնաբանում և գնահատում	Կարողանալ բառերով ճշգրիտ նկարագրել երաժշտական տպավորությունները, հիմնավորելով դրանք երաժշտական ստեղծագործության համապատասխան

		արտահայտչամիջոցների միջոցով, որոնք բխում են սովորողի՝ զգացմունքների իմաստավորման կարողությունից: Ընկալել կոմպոզիտորի մտքերը, երաժշտական կերպարի գաղափարը, որոնք զարգացնում են հուզական ապրումակցման գործընթացը:
Կապակցում	Երաժշտության պատմություն	Համաշխարհային և ազգային երաժշտության ճանաչում, երաժշտական տարբեր ուղղությունների և ժանրերի վերաբերյալ իմացություն: Սրանք խորացնում են սովորողի գեղագիտական գիտակցությունը:
	Երաժշտության դերը և նշանակությունը կյանքում	Երաժշտության միջոցով ստացած տպավորությունների նկարագրությունը նպաստում է զգացմունքների իմաստավորման, գեղագիտական դատողության գործընթացների զարգացմանը, նախընտրելի կոմպոզիտորի կամ կատարողի ներկայացումը ձևավորում է հուզական ապրումակցման, գեղագիտական գնահատման հմտությունները և հարստացնում գեղագիտական փորձը:

Աղյուսակ 1

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերլուծելով «Երաժշտություն» առարկայի պետական չափորոշչով՝ հիմնական ծրագրի ավարտին ակնկալվող վերջնարդյունքները՝ գտնում ենք, որ յուրաքանչյուր կետում առկա է սովորողի գեղագիտական զգացմունքների ձևավորման և զարգացման միտում, հուզական և զգացմունքային ոլորտների կարևորում և զարգացում: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ այս կետերը հիմնականում ներկայանում են որպես գեղագիտական զգացմունքների ձևավորման ենթադրյալ արդյունք, այլ ոչ թե կոնկրետ նպատակային վերջնարդյունք: Կարող ենք ասել, որ հուզական արձագանքի, ինքնարտահայտման

և գեղագիտական կողմնորոշման գործընթացներն իրականանում են որոշակի կատարողական և ճանաչողական գործընթացների ապահովման արդյունքում, որոնք շատ հաճախ հանդես են գալիս որպես սպասելի արդյունք, ոչ թե ձևակերպված նպատակային ուղղություն: Սա, իհարկե, բացատրվում է այն փաստով, որ «Երաժշտություն» առարկան ընդսմին զարգացնում է տարբեր ունակություններ, ինչպես՝ տեսական, կատարողական, արժեքային, գեղագիտական, ստեղծագործական և զգացմունքային: Այս առումով, գտնում ենք, որ չափորոշիչը չէր կարող հիմնված լինել միմիայն սովորողների զգացմունքների կամ գեղագիտական կողմի զարգացվածությունն ապահովելու վրա, ուստի վերջիններս ձևավորվում են շնորհիվ տարբեր բնույթի գործունեության տեսակների իրականացմամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **«Երաժշտություն» առարկայի 1-12-րդ դասարանների առարկայական ծրագիր (2023),** https://escs.am/files/files/2020-07-15/b04481dd1f12fd897c9c52b7561969d4.pdf
2. **«Երաժշտություն» առարկայի 1-12-րդ դասարանների առարկայական չափորոշիչ (2023),** https://www.arlis.am/hy/acts/176070
3. **Божович Л. (1978),** Этапы формирования личности в онтогенезе, “Вопросы психологии”, № 2, № 4., Москва, Междунар. пед. акад., с. 24-28.
4. **Выготский Л. (1984)**, Собрание сочинений, В 6-ти т.; Т.4., Москва, “Педагогика”.
5. **Петрушин В. (2008),** Музыкальная психология, Учебное пособие для вузов, 2-е изд., Москва, Академический Проект, “Трикста”.
6. **Теплов Б. (1947)**, Психология музыкальных способностей, Москва, Академии пед. наук РСФСР.
7. **Leder, H., Belke, B., Oeberst, A., & Augustin, D. (2004),** A model of aesthetic appreciation and aesthetic judgments. British Journal of Psychology, 95(4), 489–

490. https://scispace.com/pdf/a-model-of-aesthetic-appreciation-and-aesthetic-judgments-1inbbr8va3.pdf

REFERENCES

1. «Erajhshtowt'yown» ar'arkayi 1-12-rd dasaranneri ar'arkayakan c'ragir /Subject Syllabus for "Music"/, Grades 1-12, 2023. https://escs.am/files/files/2020-07-15/b04481dd1f12fd897c9c52b7561969d4.pdf
2. «Erajhshtowt'yown» ar'arkayi 1-12-rd dasaranneri ar'arkayakan c'ragir /Subject Standard for "Music"/, Grades 1-12, 2023. https://www.arlis.am/hy/acts/176070
3. **Bozhovich L. (1978)**, Etapy formirovaniya lichnosti v ontogeneze /Stages of Personality Formation in Ontogenesis/, “Issues of Psychology”, No. 2, No. 4, Moscow, International Pedagogical Academy, pp. 24-28.
4. **Vygotsky L. (1984)**, Sobraniye sochineniy /Collected Works/: In 6 volumes; Vol. 4, Moscow, “Pedagogika”.
5. **Petrushin V. (2008)**, Собрание сочинений /Musical Psychology/: A Textbook for Higher Education Institutions,2nd edition, Moscow: Academic Project; “Triksta”. p. 157.
6. **Teplov B. (1947)**, Psikhologiya muzykal'nykh sposobnostey /Psychology of Musical Abilities/, Moscow, Academy of Pedagogical Sciences of the RSFSR.
7. **Leder H., Belke B., Oeberst A., & Augustin D. (2004),** A model of aesthetic appreciation and aesthetic judgments. British Journal of Psychology, 95(4), 489–490. https://scispace.com/pdf/a-model-of-aesthetic-appreciation-and-aesthetic-judgments-1inbbr8va3.pdf

Лала Симонян

Потенциал учебного предмета «Музыка» в формировании эстетических чувств у подростков

Заключение

Ключевые слова и выражения: *Эстетические чувства, подросток, музыкальное искусство, учебный предмет «Музыка», эмоции, слушание, восприятие.*

Цель статьи представить образовательный потенциал предмета «Музыка» в формировании и развитии эстетических чувств учащихся подросткового возраста. В рамках исследования анализируются государственный стандарт и программа предмета, которые служат основой для его организации и реализации. Представлены программные и нормативные требования предмета, формы организации, тематический план для 5-9 классов и, что самое важное, ожидаемые конечные результаты, предусмотренные стандартом и программой по окончании основной школы. Выявляется, в какой степени последние способствуют формированию эстетических чувств подростков, включая эмоциональный отклик, эмоциональное сопереживание и осмысление чувств, эстетическое восприятие, оценку, а также формирование эстетических потребностей. В статье также представлены общая характеристика музыки как вида искусства и ее способность влиять на эмоции и чувства личности, а также психологическое состояние человека в подростковом возрасте, которое тесно связано с эмоциональной сферой, бурными переживаниями и проявлением чувств. Анализируя ожидаемые конечные результаты основной программы по государственному образовательному стандарту предмета «Музыка», можно отметить, что в каждом пункте прослеживается тенденция к эстетическому развитию учащегося, а также подчеркивается важность и развитие эмоционально-чувственной сферы.

Lala Simonyan

The Potential of the School Subject "Music" in the Formation of Aesthetic Feelings in Adolescents

Conclusion

Key words and expressions: *Aesthetic feelings, adolescent, musical art, school subject "Music", emotions, listening, perception, creativity.*

The aim of the article is to present the educational potential of the "Music" subject in the formation and development of the aesthetic feelings of adolescent learners. Within the scope of the study, the state standard and the syllabus of the subject, which serve as the basis for its organization and implementation, are analyzed. The article presents the syllabus and standard requirements of the subject, the forms of organization, the thematic plan for grades 5-9, and most importantly, the expected learning outcomes defined by the standard and syllabus at the end of basic school. It reveals to what extent the latter contribute to the formation of adolescents' aesthetic feelings, including emotional response, emotional empathy, and the meaningful interpretation of feelings, aesthetic perception, evaluation, as well as the formation of aesthetic needs.

The article also presents the general characteristics of music as an art form and its ability to influence an individual's emotions and feelings, as well as the psychological state of a person during adolescence, which is intimately connected to the emotional world, intense experiences, and the manifestation of feelings.

Լալա Սիմոնյան – Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Մանկավարժության ամբիոնի ասպիրանտ: Գիտական հետաքրքրությունների շրջանակ՝ երաժշտական մանկավարժություն, գեղագիտություն: simonyanlala-phd24@aspu.am

Лала Симонян – Аспирант кафедры педагогики Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна. Круг научных интересов: музыкальная педагогика, эстетика. simonyanlala-phd24@aspu.am

Lala Simonyan – PhD student at the Department of Pedagogy, Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan. Research interests: musical pedagogy, aesthetics.simonyanlala-phd24@aspu.am

Խմբագրություն է ուղարկվել 19.03.2026թ.

Հանձնարարվել է գրախոսության 02.04.2026թ.

Հրապարակման է ներկայացվել 31.07.2026թ.